

Մանկական բանաստեղծություններ

[Ծիսիկի Օրորքը](#)

[ԱրՏՈՒՏԻԿ](#)

[Փիսոն](#)

[ԿՌՈՒՆԿՆԵՐ](#)

[ԾիՏը](#)

[ԼՈՒՍԱԲԱՑԻՆ](#)

[ՇՈՒՆԸ](#)

[ԳՐԻՉ](#)

[ԱՌԱՋԻՆ ՁՅՈՒՆԸ](#)

[ՓԻՍԻԿԻ ԳԱՆԳԱՏԸ](#)

[ՄԱՐՏ](#)

[ԵՐԵՔ ԽԵԼՈՔ](#)

[ԲԶԵԶԻ ԴՊՐՈՑԸ](#)

[ԱՄՊՆ ՈՒ ՍԱՐԸ](#)

[ՔԱՄԻՆ](#)

[ՄԻ ԲԱՅ ՆԱՄԱԿ ԱՍԵՆՔԻՆ](#)

[ՈՒԼՈՒՆՔ](#)

[ԳՈՒԹԱՆ](#)

[ՓՈՔՐԻԿ ԵՐԿՐԱԳՈՐԾ](#)

[ԱՇՈՒՆ](#)

[ԻՐԻԿՈՒՆ](#)

[ԾԱՂԻԿՆԵՐԸ](#)

[ԹՈՉՈՒՆԻ ՄՏԱԾՍՈՒՆՔԸ](#)

[ԱՂՎԵՍԸ](#)

[ԳԵՏԱԿԸ](#)

[ՈՒՐԱԳ ՈՒ ՍՂՈՑ](#)

[ԷՍ ԷՆ Է](#)

[ՏԵՐԵՎԱԹԱՓ](#)

[ԿԱՆԱՆՉ ԱԽՊԵՐ](#)

[ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ՏՈՒՆԸ](#)

[ԱՐԱԳԻԼ](#)

[ԿՈՒՅՐԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ \(Արևելքի առակներից\)](#)

[ԱՂԲՅՈՒՐ](#)

[ԱԽ ԻՆՉ ԼԱՎ Է](#)

[ԱՄԱՌՎԱ ԳԻՇԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ](#)

[ԱՇՆԱՆ ՎԵՐՁԸ](#)

[ԳԱՐՆԱՆ ԱՌԱՎՈՏ](#)

[ՀԱՄԵՐԳ](#)

[ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ](#)

[ՃՆՃՂՈՒԿՆԵՐ](#)

## **ԾԻՏԻԿԻ ՕՐՈՐՔԸ**

Կախված է ճյուղքից ճոճը ծիտիկի.  
Փըչի՛, հովիկ, փըչի՛,  
Ճոճն օրորվի, տանի բերի  
Նանի՛, ծիտիկ, նանի՛ :  
Ծիտիկը անուշ երազ է տեսնում.  
Փըչի՛, հովիկ, փըչի՛,  
Ճոճն օրորվի, տանի բերի.  
Նանի՛, ծիտիկ, նանի՛ :  
Բայց տես, ծիտիկը քրնից չըզարթնի.  
Կամա՛ց փըչի, կամա՛ց,  
Ճոճն էլ զգուշ տանի բերի,  
Նանի՛, ծիտիկ, նանի՛ :

## **ԱՐՏՈՒՏԻԿ**

Արտուտիկ,  
Նախշուն տոտիկ,  
Իջնեն կալեր  
Գողտիկ-մղտիկ,  
Ընտրեն քարեր,  
Ուտեն կուտիկ,  
Կըծըվըլան  
Կըլթիկ-կըլթիկ:

## **ՓԻՍՈՆ**

Փիսոն, փիսոն մլավան,  
Թավրիզ թողեց, փախավ Վան,  
Լեզուն թաթխան, երկար պոչ,  
Ինչ որ ուզեց, ասին՝ ո՛չ:  
Փիսոն գնաց գողեգող,  
Փորը դատարկ, սիրտը դող,  
Դունչը մեկնեց կովկիթին,  
Շերեփն իջավ ճակատին:

## **ԿՌՈՒՆԿՆԵՐ**

Կը՛ռ կը՛ռ, կըռկըռան.  
Կռունկները հա՛ թռան.  
Կռունկների թնի տակ  
Եկավ գարուն մեր դռան:

## **ԾԻՏԸ**

Հուտին գնաց բանջարի,  
Բանջար չեղավ՝ խոտ եղավ,  
Խոտի տակին ծիտ եղավ,  
Ծըվըլալեն դուրս թռավ:

Ծիտը թռավ գերանին,  
Կանաչ խոտը բերանին:

### ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

— Ծուղրուղո՛ւ.

Աքլորը զիլ կանչեց թառին.

— Ճի՛կ-ճի՛կ, ճի՛կ-ճի՛կ,

Զարթնեց սթնում ծիտը ծառին:

Ծուղրուղո՛ւ.

Խոսեց ծեգին երկրորդ բերան.

— Հո-հո՛, հո-հո՛,

Նախիրն արդեն հանդը տարան:

— Ծուղրուղո՛ւ.

Լույսը բացվեց երրորդ կանչին.

— Վո՛ւյ-վո՛ւյ-վո՛ւյ-վո՛ւյ,

Նստեց նանը տեղի միջին:

### ՇՈՒՆԸ

Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,

Ահա այսպես

Հաչում եմ ես,

Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ.

Ու տունն այսպես

Պահում եմ ես:

Թե գա մեզ մոտ

Մի հին ծանոթ,

Մոտն եմ վազում,

Պոչքս շարժում:

Բայց թե մի գող,

Զար կամեցող

Ուզի թաքուն

Մտնի մեր տուն,—

Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,

Ահա այսպես

Հաչում եմ ես.

Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,

Ու տունն այսպես

Պահում եմ ես:

### ԳՐԻՉ

Ի՞նչ կըլինի, ասա՛, գրիչ,

Ինձ էլ սիրես գոնե մի քիչ:

Ինչո՞ւ իմ մեծ քրոջ ձեռքին

Գրում ես միշտ վարժ ու կարգին.

Իսկ իմ ձեռքին խազմըզում ես  
Սև ազոավի ճանկերի պես:  
Ես քեզ վատ բան ի՞նչ եմ արել:  
Ե՛կ, խնդրում եմ՝ ինձ համար էլ  
Գրի էնպես արագ-արագ,  
Էնպես ուղիղ, սիրուն, բարակ:  
Գրիչը լուռ լքում, լքում,  
Ճրոճրոռում է ու խազմըզում,  
Բայց այս անգամ արդեն կարծես,  
Փոքրիկ ծոփ ճանկերի պես:

### ԱՌԱՋԻՆ ՉՅՈՒՆԸ

— Վա՛յ, մայրի՛կ ջան, տե՛ս,  
Բակն ու դուռը լի  
Ինչքա՛ն սպիտակ  
Թիթեռ է գալի...  
Էսքան շատ թիթեռ  
Չեմ տեսել ես դեռ:  
— Չէ՛, իմ անուշիկ,  
Թիթեռներ չեն էտ.  
Թիթեռներն անցան  
Ծաղիկների հետ:  
Էտ ձյունն է գալի,  
Փաթիլն է ձյունի,  
Որ կարծես սպիտակ  
Թիթեռնիկ լինի:

### ՓԻՍԻԿԻ ԳԱՆԳԱՏԸ

Փիսիկը նստել  
Մի մութ անկյունում,  
Ունքերը կիտել  
Ու լաց է լինում:  
Մոտիկ է գալիս  
Մի ուրիշ կատու.  
— Ինչո՞ւ ես լալիս,  
Ա՛յ փիսիկ ջան, դու...  
— Հապա ի՞նչ անեմ,  
Որ լաց չըլինեմ.—  
Գանգատ է անում  
Փիսուն տըխրադեմ:  
Էն Համոն թաքուն  
Մածունը կերավ,  
Գընաց տատի մոտ  
Ինձ վրրա դըրավ:  
Հիմի տատիկի  
Ետևից ընկած,  
Ինձ են ման գալի

Մի-մի փետ առած  
Էն քոթոթ Սուրենն,  
Անոն ու Մոսոն:  
Ո՞ւր է, ասում են,  
Ո՞ւր է գող Փիսոն,  
Ա՛խ, թե մի գրտա՛նք,  
Մածուն ցույց կըտա՛նք.  
Էսպես բան սարքեց  
Էն Համոն իմ դեմ.  
Ի՞նչ անեմ հապա,  
Որ լաց չըլինեմ...  
Ու Փիսոն նըստել  
Մի մութ անկյունում,  
Ունքերը կիտել  
Ու լաց է լինում:

### ՄԱՐՏ

Ա՛խ, է՛սպես էլ գիժ ամիս.  
Մարդու հանգիստ չի տալիս:  
Էսօր ուրախ օր կանի,  
Վաղը անձրև ու քամի.  
Առավոտը պայծառ օդ,  
Կեսօրը մութ ու ամպոտ:  
Մին հագնում է սպիտակ,  
Մին կանաչին է տալիս.  
Մի օր ցուրտ է, մի օր տաք,  
Մին խնդում է, մին լալիս...  
Ա՛խ, է՛սպես էլ գիժ ամիս:

### ԵՐԵՔ ԽԵԼՈՔ

Երեք խելոք մի հին տաշտով,  
Ավելն առան մըտան մեծ ծով:  
Թե տաշտակը շատ դիմանար,  
Իմ հեքիաթն էլ կըլներ երկար:

### ԲԶԵԶԻ ԴՊՐՈՑԸ

Վարպետ Բըզեզն ամռան մի օր  
Դըպրոց բացեց մեծ ծառի տակ  
Ու հավաքեց թիթեռ, ճանճ, բոռ,  
Մըժեղ, մըրջյուն, մըլակ, մոծակ...  
— Գիտե՞ք, ասավ, իմ փոքրիկներ,  
Պիտի սովրեք, սովրեք անվերջ,  
Որ իմանաք ինչ է ձեզ պետք,  
Ինչ կա ձեր շուրջն ու կյանքի մեջ:

Պիտի սովրեք, սովրեք էնքան,

Մինչև դառնաք ինձ պէս վարպետ:  
Դե նըստեցէք հիմի հանդարտ,  
Ինչ որ կասեմ՝ կըրկնէք ինձ հետ:

Ա. Անթառամ, Բ. Բարձմենակ.  
Գ. Գաղտիկուռ, Դ. Դըդում...  
Է՛յ, դու մորե՛ իս, դեսն ականջ դիր,  
Ի՞նչ ես էդտեղ կըտըրտում:

Ե. Երիցուկ, Զ. Զանազան,  
Է. Էշխըրտուկ, Ը. Ընկուզ...  
Մի՛ աղմըկէք, հանաք հո չի՞ .  
Թիթե՛ն, հանգի՛ստ, մոծակ, սո՛ւս:

Մի՛ խառնըվէք, չեմ սիրում ես  
Էդպէս աղմուկ, աղաղակ:  
Թ. Թըրթընջուկ, Ժ. Ժախ ու բոխ,  
Ի. Իշառվույտ, Լ. Լեղակ:  
Խ. Խընձորուկ, Ծ. Ծիրան,  
Կ. Կըռոթուկ, Զ. Զաղարջ...  
— Տե՛ս, վարժապետ, ես մըլակիին,  
Ինձ ասում է՝ սարի արջ:

— Ա՛յ տղա, է՛յ, չեն հայհոյիլ:  
Տըզզան հիմար անասուն...  
Ձ. Ձըմերուկ, Ղ. Ղանձլամեր,  
Ճ. Ճարճատուկ, Մ. Մասուր:

Դու, է՛յ ծըղրիդ, ո՞նց ես նըստել.  
Գըլուխդ— ետ, մեջքըդ— դուրս:  
Յ. Յունապի, Ն. Նունուֆար,  
Շ. Շագանակ, Ո. Ողկույզ:

— Վա՛յ, ես ինչե՛ր կան՝ դասերում.  
Ողկույզը ես շատ եմ սիրում...  
— Իսկ ես կաղամբ կուտե՛մ, կուտե՛մ...  
— Իսկ ես՝ ծիրան... — իսկ ես՝ կուտեմ...

Ձեզ չեն հարցնում՝ ի՛նչ կուտէք դուք  
Քընաթաթախ՝ առտեհան:  
Չ. Չինարի, Պ. Պատատուկ  
Ջ. Ջըրկոտեմ, Ռ. Ռեհան:  
Ս. Սերկևիլ, Վ. Վարդենի,  
Տ. Տերեփուկ, Յ. Յաքի...  
Ո՛ւհ, մարդ քարից պիտի լինի,  
Ձեր մեջ գըլուխ կըճաքի:

Փ. Փըրփըրրուկ. Ք. Քարասոխ,  
Օ. Օֆ, պըրծանք վերջապես...  
Դե գնացեք, վաղը կգաք  
Անգիր արած ջըրի պես:—

Ու հավաքած թիթեռ, ճանճ, բոռ,  
Մըժեղ, մըրջյուն, մըլակ, մոծակ,  
Վարպետ Բըզեզն՝ ամառն էսպես  
Դաս էր տալիս մի ծառի տակ:

### ԱՄՊՆ ՈՒ ՍԱԸԸ

Ամպը եկավ նստեց սարին,  
Նստեց սարի սուր կատարին:  
— Լըսի՛, պապի՛, ասավ նրան,  
Լավ օրերըդ անցան, կորան.  
Խիստ սուկալի  
Ցուրտ է գալի:  
    Ասավ, գնաց:  
    Սարը կամաց  
    Մտավ սիպտակ  
Վերմակի տակ:

### ՔԱՄԻՆ

— Ո՛ւ-ն՛ւ-ն՛ւ...  
Քամին է, քամին,  
Տես անգգամին.  
Բերան չունի՝ փըչում է,  
Թներ չունի՝ թոչում է,  
Ձեռքեր չունի՝ քաշում է,  
Իմ փոքրիկին քըշում է:

Կորի՛, դու քամի,  
Անպիտան քամի:  
Մի վախի, ջանիկ,  
Փեշըս պինդ բռնի,  
Ես թող չեմ անի,  
Քամին քեզ տանի:

### ՄԻ ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՄԵՆՔԻՆ

Դաշտ ու անտառ, գյուղի ճամփան  
Ծածկըվել է մի թիզ ձյունով.  
Էլ չի ճարվում ուտելու բան,  
Ո՞վ է տեսել էս տեսակ սով.  
Ոչ մի ցորեն, ոչ մի հատիկ...  
Խնդրում ենք ձեզ, բարի մարդիկ,  
Աստծու սիրուն, մի կըտոր հաց,

Կոտորվեցինք, մեռանք սոված:

Շուտով կրգան օրեր գարնան,  
Մենք ձեզ համար կերգենք զրվարթ,  
Ու փոխարեն ձեր լավության  
Ձեր պարտեզը, այգին ու արտ  
Կըմաքրենք մենք թըրթուրներից,  
Ճիճուներից ու որդերից.  
Միայն հիմի մի կտոր հաց,  
Կոտորվեցինք, մեռանք սոված:

Մի խումբ ծտերի կողմից՝  
Ծիտիկ Ճնճղուկյան

### **ՈՒԼՈՒՆՔ**

Գարունը եկավ ամպերով,  
Ամպերը եկան անձրևով.  
Անձրևը տանեմ արտին տամ,  
Արտը ինձ ցորեն տա.  
Ցորենը տանեմ ջաղացին տամ,  
Ջաղացը ինձ այլուր տա.  
Այլուրը տանեմ տաշտին տամ,  
Տաշտը ինձ խմոր տա.  
Խմորը տանեմ թոնրին տամ,  
Թոնիրը ինձ հաց տա.  
Հացը տանեմ բոշին տամ,  
Բոշեն ինձ ուլունք տա.  
Ուլունքը տանեմ նանիս տամ,  
Նանս ինձ ծեծի՛, ծեծի՛,  
Տանից քշի, դուրս անի:

### **ԳՈՒԹԱՆ**

Լուսը լուսացավ,  
Բարին շատացավ.  
Վաղ լուսաբացին  
Գութան լծեցին.  
Հորովել, հո ...

Ցանենք, արտ անենք,  
Հնձենք տուն տանենք,  
Ունենանք շատ հաց.  
Օրհնյալ է աստված.  
Հորովել, հո ...

### **ՓՈՔՐԻՎ ԵՐԿՐԱԳՈՐԾ**

Եկավ գարուն, եկան հավքեր,  
Տաքցավ արև, գլգլան ջրեր,



Եկան վարի-ցանքի օրեր:  
Կռունկն ամոլ արեցի,  
Մագերն հորիք լրծեցի,  
Ճնճղուկն հոտաղ վարձեցի,  
Կաքավն հացվոր բռնեցի,  
Արտ ունեի՝ վարեցի,  
Ցորեն, գարի ցանեցի:

### **ԱՇՈՒՆ**

Դեղնած դաշտերին  
Իջել է աշուն,  
Անտառը կրկին  
Ներկել է նախշուն:  
Պաղ-պաղ մեզի հետ  
Փչում է քամին,  
Քշում է տանում  
Տերևը դեղին:  
Տըխուր հանդերից  
Մարդ ու անասուն  
Քաշվում են կամաց  
Իրենց տունն ու բուն:

### **ԻՐԻԿՈՒՆ**

Արևը շատ էր հոգնել, ման էր եկել ամբողջ օրը.

«Հերիք է, ասավ,  
Գնամ պառկեմ ու քնեմ»:

Տերևը ուրախ սրվաբլում էր, որ կանգ առավ.

«Էս ի՞նչ է, ասավ,  
Արևն էլ չի երևում.

Ես էլ պառկեմ ու քնեմ»:

Թռչնակը երգում էր ծառի վրա, հանկարծ լռեց.

«Էս ի՞նչ է, ասավ,

Ո՛չ տերև է սրվաբլում,  
Ո՛չ արևն է երևում.

Ես էլ գնամ ու քնեմ»:

Նապաստակը ուստուտում էր թփերի տակ, որ ականջը սրեց.

«Էս ի՞նչ է, ասավ,

Ո՛չ թռչնակ է ծըլվըլում,  
Ո՛չ տերև է սրվաբլում,

Ո՛չ արևն է երևում.

Ես էլ գնամ ու քնեմ»:

Որսկանը անտառում որս էր որոնում, կանգնեց.

«Էս ի՞նչ է, ասավ,  
Ո՛չ նապաստակ է վազ տալի,

Ո՛չ թռչնակ է ծըլվըլում,

Ո՛չ տերև է սրվաբլում,

Ո՛չ արևն է երևում.

Ես էլ գնամ ու քնեմ»:  
Լուսինը ծագեց, ցած նայեց, տեսավ.  
«Ի՛նչ լավ է, ասավ,  
Ո՛չ որսորդ է ման գալի,  
Ո՛չ նապաստակ վագ տալի,  
Ո՛չ թռչնակ է ծըլվըլում,  
Ո՛չ տերն է սըվսըվում,  
Ո՛չ արևն է երևում.  
Մենակ ես եմ որ անքուն  
Քեֆ եմ անում երկնքում»:

### ԾԱՂԻԿՆԵՐԸ

— Ո՞ւր գնացին ծաղիկները...  
— Սո՛ւս. քնած են հողի տակ,  
Տաք ծածկված ողջ ձմեռը  
Ձյուն-ծածկոցով սպիտակ:  
Կգա գարնան արևն էլ ետ  
Իր շողերով կենդանի,  
Ձմռան սաստիկ ցրտերի հետ  
Ձյուն-ծածկոցը կըտանի:

«Ելե՛ք, կասի, իմ մանուկնե՛ր»,  
Ու հենց նրանք իմանան,  
Դուրս կըհանեն գլխիկները,  
Աչիկները կըբանան:

### ԹՈՉՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ  
Առատ ու անփույթ,  
Աշխարհքն ինձ համար կըլոր էր անվերջ,  
Կեղևը կապույտ:  
Նըրանից հետո աչքըս բաց արի  
Մի փոքրիկ բընում,  
Տեսա՝ աշխարհքը հարդից է շինած,  
Ու մայրս է շինում:

Մի օր էլ, բընից գըլուխս հանած,  
Նայում եմ դեւ-դեն,  
Տեսնեմ՝ աշխարհքը տերնից շինած,  
Մեր բունը վըրեն:

Հիմի թըռչում եմ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ,  
Ամեն տեղ գընում,  
Բայց թե աշխարհքը ինչի՞ց է շինած—  
Էլ չեմ հասկանում:

## ԱՂՎԵՍԸ

Աղվեսն եկավ մութ անտառից,  
Հարցմունք արավ լիքը թառից.  
Մեծ խորոզ է հարկավոր ինձ.  
Քաղցած աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվեսն հագել քուրքը դեղին,  
Պըտուտ կուգա շուրջը գեղին.  
Ջուր կըտըրվեց տատիս լեղին.  
Դեղին աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվեսն ասավ պառավ տատին.  
«Մըտիկ չեմ տա ձեռիդ փետին,  
Կարոտել եմ թըմբլիկ ճուտին».  
Անվախ աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվեսն եկել, նստել դեզին,  
Երկար ազին ծըռել վըզին,  
Աչք է գցել մեր խորոզին...  
Էս գող աղվեսն, ազին ծաղիկ:

Մին էլ կանչեց տատըս պառավ.  
Ամա՛ն, հասե՛ք, տարա՛վ, կերա՛վ...  
Գըլխիս էս ինչ փորձանք բերավ  
Անտեր աղվեսն, ազին ծաղիկ:

Ա՛յ իմ խորոզ, կարմիր խորոզ,  
Ման կու գային գոռոզ-գոռոզ.  
Փետուրդ արավ ողջ դարուփոս  
Էն չար աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվե՛ս, աղվե՛ս, փոքրիկ գագան,  
Ոտքերդ կարճ ու խիստ վագան,  
Շըներն ամեն քեզ չհասան,  
Ճարպիկ աղվես, ազին ծաղիկ:

## ԳԵՏԱԿԸ

— Ո՞ւր ես վագում  
Այդպես արագ,  
Ա՛յ դու կայտառ,  
Միրուն գետակ.  
Կանգ առ, խաղանք  
Էս ծառի տակ:

«Չէ՛, փոքրիկըս,  
Գնամ պիտի.  
Տե՛ս ջաղացը

Գյուղի մոտի,  
Պետք է ուժ տամ,  
Որ պըտըտի:

Ցածն էլ հովտում  
Անուշահոտ  
Ինձ են մնում  
Ծաղիկ ու խոտ,  
Հոգնած-ծարավ  
Տավարն ու հոտ:

Սառն աղբյուրը  
Բարձրը սարի  
Դրանց համար  
Է ինձ տալի  
Իր գով ջուրը  
Կըլկըլալի:

Իսկ կամուրջի  
Տակն էլ որ գա,  
Կա լվացքը  
Պառավ կընկա,  
Պետք է լվամ  
Քանի լույս կա:

Դե՛, տեսնո՞ւմ ես,  
Մնա՛ս բարով,  
Ճամփաս ցանած  
Հազար գործով.  
Դադար չունեմ  
Ես մինչև ծով»:

### **ՈՒՐԱԳ ՈՒ ՄՂՈՑ**

Մի՛ լինի ուրազի պես,  
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ,  
Այլ եղիր սղոցի պես,  
Մին դեպի քեզ, մին դեպի մեզ:

### **ԷՍ ԷՆ Է**

1.  
Էս են տունն է, որ շինել է վարպետ Օհանը:

2.  
Էս են ցորենն է, որ պահած է են տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:

3.

Էս էն մուկն է, որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:

4.

Էս էն կատուն է, որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:

5.

Էս էն շունն է, որ գրգել է էն կատվին,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:

6.

Էս էն կովն է՝ կեռ պոզավոր,  
որ հարու է տվել էն շանը,  
որ գրգել է էն կատվին,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:

7.

Էս էն աղջիկն է, որ կթել է էն կովը,  
որ հարու է տվել էն շանը,  
որ գրգել է էն կատվին,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:

8.

Էս էն տղան է, որ ուզել է էն աղջկանը,  
որ կթել է էն կովը,  
որ հարու է տվել էն շանը,  
որ գգել է էն կատվին,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:

9.

Էս էն տերտերն է, որ պսակել է էն տղին,  
որ ուզել է էն աղջկանը,  
որ կթել է էն կովը,  
որ հարու է տվել էն շանը,  
որ գզել է էն կատվին,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:

10.

Էս էն աքլորն է, որ զարթեցրել է էն տերտերին,  
որ պսակել է էն տղին,  
որ ուզել է էն աղջկանը,  
որ կթել է էն կովը,  
որ հարու է տվել էն շանը,  
որ գզել է էն կատվին,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:

11.

Էս էլ էն վարպետ Օհանը,  
որ մորթել է էն աքլորին,  
որ զարթեցրել է էն տերտերին,  
որ պսակել է էն տղին,  
որ ուզել է էն աղջկանը,  
որ կթել է էն կովը,  
որ հարու է տվել էն շանը,  
որ գզել է էն կատվին,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:

### **ՏԵՐԵՎԱԹՄՓ**

Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ,—  
Ասավ քամին տերևներին,—  
Աշուն եկավ, մոտ է ձմեռ,  
Ի՞նչ եք դողում ծառի ծերին:  
Ոսկի, դեղին, վառ ծիրանի  
Գույներ հագեք խայտաբղետ  
Ու ճյուղերից ձեր մայրենի  
Եկե՛ք ինձ հետ, փախե՛ք ինձ հետ...  
Եկե՛ք տանեմ հեշտ ու անթև,

Անհետ ճամփով, անհայտ տեղեր,  
Չեք իմանա այսուհետև  
Էլ ինչ է դող, ինչ է ձմեռ...

Տերևները հենց լսեցին,  
Նախշուն, նախշուն գույներ հագան,  
Մըվսըվալով տխուր երգեր՝  
Քամու թևին թռան, փախան:

### **ԿԱՆԱՆՉ ԱԽԱԿԵՐ**

Է՛յ կանանչ ախպեր,  
Է՛յ ճանանչ ախպեր,  
Արի՛, քեզ հետ բե՛ր  
Արևի շողեր.  
Բեր անուշահոտ  
Ծիլ, ծաղիկ ու խոտ,  
Կարկաչուն վըտակ,  
Երկինք կապուտակ,  
Խատուտիկ հավքեր,  
Զրընգան երգեր,  
Գառների մայուն,  
Խաղ, ուրախություն .  
Է՛յ կանանչ ախպեր,  
Է՛յ ճանանչ ախպեր:

### **ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ՏՈՒՆԸ**

Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ  
Ու ջուրն աղմըկում, անվերջ փրփրում,  
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ  
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում,  
Մի գորշ խըրճիթում,  
Մի հին խըրճիթում,  
Գետի եզերքին,  
Ծառերի տակին:

Մի օր էլ եկավ անհանգիստ տղան,  
Կանգնեց իր բարի, իր սիրող մոր դեմ.  
«Մայրիկ, էստեղից պետք է հեռանամ.  
Միակ ձանձրալի տեղը, որ գիտեմ,  
Էս գորշ խըրճիթն է,  
Էս հին խըրճիթն է,  
Գետի եզերքին,  
Ծառերի տակին:

Թո՛ղ զրնամ շըրջեմ աշխարհից աշխարհ,  
Ճամփորդեմ լավ-լավ տըներ տեսնելու,  
Ամենից լավը ընտրեմ մեզ համար,

Գամ քեզ էլ առնեմ ու փախչենք հեռու

Էս գորշ խրրճիթից,

Էս հին խրրճիթից,

Գետի եզերքին,

Ծառերի տակին»:

Ու գնաց, երկար թափառեց տրդան,

Մեծ ու հոյակապ շատ տրներ տեսավ,

Բայց միշտ, ամեն տեղ պակաս էր մի բան...

Ու հառաչելով ետ վերադարձավ

Էն գորշ խրրճիթը,

Էն հին խրրճիթը,

Գետի եզերքին,

Ծառերի տակին:

«Գըտա՞ր, գավա՛կըս», հարցրրեց մայրը,

Ուրախ, նայելով իր տրդի վրրա:

«Ման եկա, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,

Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,

Էս գորշ խրրճիթն է,

Էս հին խրրճիթն է,

Գետի եզերքին,

Ծառերի տակին»:

## ԱՐԱԳԻԼ

Արագի՛լ, բարով եկար,

Հա՛յ, արագի՛լ, բարով եկար.

Դու մեզ գարնան նշան բերիր,

Մեր սրտերը ուրախ արիր:

Արագի՛լ, երբ գրնացիր,

Դու մեզանից երբ գրնացիր,

Հա՛ փրչեցին բուք ու բորան,

Ծաղիկները ամեն տարան:

Արագի՛լ, բարով եկար,

Հա՛յ, արագի՛լ, բարով եկար.

Բունըդ շինիր էն հին ծառին

Մեզ մոտ մնա ամբողջ տարին:

## ԿՈՒՅՐԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ

(Արևելքի առականերից)

Օրը ցերեկով

Երեք-չորս հոգով

Կույրերը եկան

Փրդին դեմ ընկան:

Մինը, որ մարմնին դիպավ հաստ, ահեղ,

— Հե՛յ, զգո՛ւյշ, կանչեց, մի պատ կա էստեղ:



Մյուսը, որ ոտն էր շոշափել իր դեմ՝  
— Ի՛նչ պատ, ծիծաղեց, էս կոճղ է կարծեմ:  
Երբորդի ձեռը կընճիթն էր ընկել.  
— Օձ է, օձ, գոռաց, էլ ի՛նչ եք կանգնել:  
Մինչդեռ չորբորդը պոչիցը բռնած  
Քահ-քահ խնդալով ծաղրում էր նրանց.  
— Վա՛հ, ճիշտ որ կույր եք. չիմացավ ոչ ոք:  
Ոչ էս է, ոչ էն, այլ կախած մի թոկ:  
Չէ՛, պատ է,— չէ, կոճղ— չէ, օձ է,— չէ, թոկ...  
Ու աղմըկելով ամեն մինը ջոկ,  
Ինչպես որ եկել  
Դեմ էին ընկել,  
Էնպես էլ կույր-կույր ետ դարձան կըրկին—  
Մարի պես փիղը պարզ լուսի տակին:

### **ԱՂՔՅՈՒՐ**

Մարի լանջին, ժայռի տակ,  
Ջուր էր բխում սառնորակ  
Ու ցրվելով խոտերում  
Իգուր ճահիճ էր դառնում:

Նրա առջև մի խոր գուշ  
Շինեց հովիվն ու անուշ  
Խաղ ասելով նա տարավ  
Ջրեց հոտը իր ծարավ:

Պախրեն անցավ էն սարից՝  
Շոգից հանած չոր լեզուն,  
Կուշտ-կուշտ խմեց աղբյուրից,  
Ապա նայեց աստծուն:

Անցվորն եկավ տոթակեզ,  
Մառն աղբյուրին որ հասավ,  
Գըլխարկն առավ ու չոքեց՝  
Խմեց, սիրտը հովացավ:

Ու տվավ իր օրհնանքը  
Անցվոր մարդը էն բարի.  
«Քո շինողի օր-կյանքը  
Ջրի նման երկարի՛ ...»

### **ԱԽ ԻՆՉ ԼԱՎ Է**

Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վըրա  
Անցնում օրերն, անո՛ւշ, անո՛ւշ,  
Անըրջային, թեթևասահ  
Ամպ ու հովերն անո՛ւշ, անո՛ւշ:

Ահա բացվեց թարմ առավոտ  
Վարդ է թափում սարին-քարին,  
Շաղ են շողում ծաղիկ ու խոտ,  
Շընչում բուրմունք եղեմային:

Ա՛խ, ի՛նչ հեշտ են սարի վըրա  
Սահում ժամերն անո՛ւշ, անո՛ւշ,  
Շըվին փըչեց հովիվն ահա—  
Աղջիկն ու սերն անո՛ւշ, անո՛ւշ:

### ԱՄԱՌՎԱ ԳԻՇԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Լուսընկա գիշեր,  
Երկինքը պայծառ,  
Անհամար աստղեր  
Ցոլցում են վառ:

Քնած է արդեն  
Հովտի մեջ գյուղը,  
Մթնած ու լուռ է  
Գյուղացու հյուղը:

Հոգնած գյուղական  
Ընտանիքն ահա  
Մրահում, կալում,  
Կամ կըտրի վրա:

Երկնքի դիմաց  
Գրկված են քնած,  
Վերնիցն, ասես,  
Ժպտում է աստված:

### ԱՇՆԱՆ ՎԵՐՁԸ

Սարի լանջին,  
Մեզի միջում  
Խոխոջում է  
Ու տըրտընջում  
Ջուրը բարակ,  
Ջուրը տըխուր.  
— Վաշ-վի՛շ, վաշ-վի՛շ,  
Ո՞ւր կորան, ո՞ւր,  
Տերն ու խոտ,  
Վարդը շաղոտ,  
Սարվորն ուրախ,  
Մըրինգ ու խաղ:  
Շուրջըս դատարկ,  
Շուրջըս տըխուր...

## **ԳԱՐՆԱՆ ԱՌԱՎՈՏ**

Բարի լուսի զանգեր զարկին  
Զընգզընգալեն անո՛ւշ, անո՛ւշ.  
Լուսը բացվեց մեր աշխարհքին  
Ճրդճրդալեն անո՛ւշ, անո՛ւշ:

Հովտում առուն խոխոջում է  
Գըլգըլալեն անո՛ւշ, անո՛ւշ.  
Քամին բարակ շքնկշքնկում է  
Զըլզըլալեն անո՛ւշ, անո՛ւշ:

Կռունկն եկավ երամ կապած  
Կըկըռալեն անո՛ւշ, անո՛ւշ,  
Կաքավ քարին տաղ է կարդում,  
Կըկըրդալեն անո՛ւշ, անո՛ւշ:

Հարսն ու աղջիկ հանդերն ելան  
Շորորալեն անո՛ւշ, անո՛ւշ.  
Ծաղկանց բուրմունքն անմահական  
Սըլսըլալեն անո՛ւշ, անո՛ւշ:

Վաշ-վի՛շ, վաշ-վի՛շ,  
Ո՞ւր կորան, ո՞ւր:

## **ՀԱՄԵՐԳ**

Վրտակը ժայռից ներքն է թըռչում,  
Թափ առած ընկնում քարերի գըլխին,  
Զարկում ավազին, շաչում է, ճըչում,  
Ճըչում անհանգիստ, փըրփուրը բերնին:  
Ինչպես ծերունին, ձենով պառաված,  
Չայնակցում է ժիր թոռնիկի երգին,  
Այնպես է ծերուկ անտառը կամաց  
Արձագանք տալի ջըրի աղմուկին:

Այնինչ բընության զըվարթ համերգի  
Ունկընդիրն անխոս ու հավերժական,  
Ժայռը մտախոհ՝ իր մըռայլ մըռքի  
Ետնից ընկած լըսում է նըրան:

## **ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ**

Արև բացվեց թուխ ամպերեն,  
Կաքավ թըռավ կանաչ սարեն,  
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,  
Բարև բերավ ծաղիկներեն.  
Սիրունի՛ կ, սիրունի՛ կ,  
Նախշուն կաքավիկ:

Քո բուն հյուսած ծաղիկներով՝  
Շուշան, նարգիզ, նունուֆարով,  
Քո տեղ լրցված ցող ու շաղով,  
Քընես, կելնես երգ ու տաղով.  
Սիրունի՛ կ, սիրունի՛ կ,  
Նախշուն կաքավիկ:

Քո թն փափուկ ու խատուտիկ,  
Պըստի կըտուց, կարմիր տոտիկ,  
Կարմիր-կարմիր տոտիկներով,  
Կըշորորաս ճուտիկներով.  
Սիրունի՛ կ, սիրունի՛ կ,  
Նախշուն կաքավիկ:

Երբ կրկանգնես մամռոտ քարին,  
Սաղմոս կասես ծաղիկներին,  
Սարեր ձորեր զըվարթ կանես,  
Դարդի ծովեն սիրտ կըհանես.  
Սիրունի՛ կ, սիրունի՛ կ,  
Նախշուն կաքավիկ:

#### ՃՆՃՂՈՒԿՆԵՐ

Կոտ ու կես կորեկ ունեմ ցանելու համար,  
Ճնճղուկներ թռան եկան ուտելու համար,  
Կռացա քար վեր առա զարկելու համար,  
Ղասաբներ դանակ բերին մորթելու համար,  
Աղջիկներ թն քաշեցին փետրելու համար:  
Պառավներ պղինձ դրին եփելու համար:  
Դուռ-դրկից շուրջ բազմեցին ուտելու համար,  
Տերտերներ խաչով եկան օրհնելու համար,  
Աշուղներ սագով եկան գովելու համար.  
Ա՛յ ճնճղուկիկ,  
Կարմիր տոտիկ,  
Սիպտակ փորիկ,  
Ուտեն կուտիկ,  
Խմեն ջրիկ  
Առվի եզրիկ,  
Պստիկ-մստիկ,  
Փախչեն երթան ման գալու համար:

